## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2026թ. N 366-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 17 ՇԵՆՔ 26 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արուսյակ Սարգսի Գանապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արուսյակ Սարգսի Գանապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 17 շենք 26 բնակարանի (վկայական N 13092024-07-0060) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 17 շենք 26 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հուլիսի 2026թ. N 367-Ա

### ԿԱՐԻՆԵ ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆԻՆ
### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Կարինե Աշուղաթոյանի ներկայացուցիչ Սևակ Ծռիկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 30/53 (ծածկագիր՝ 07-003-0037-0193, վկայական N 04072022-07-0051) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0024 հեկտար մակերեսով հողամասում ավտոտնակի կառուցման նպատակով Կարինե Աշուղաթոյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N ՇԹ/742/31108-26 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2026թ. N 368-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 267-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հիմք ընդունելով «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արշակ Արիստակեսյանի դիմում ու 2026 թվականի հուլիսի 01-ին կնքված Պայմանագիրը լուծելու համաձայնագիրը՝ ***որոշում եմ.***

1.Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 19-ի « «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին» N 267-Ա որոշումը՝ լուծելով «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2026 թվականի մայիսի 19-ին կնքված Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին թիվ 10 պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2026թ. N 369-Ա

### «ՕՆԼԻԱԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 41-Ն որոշմամբ սահմանված Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արշակ Արիստակեսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-055-0204-0001 կադաստրային ծածկագրով հողամասի (40°21'33.22"C, 44°38'13.32"B կոորդինատների սահմաններում) վրա ժամանակավոր տեղադրել 6.5 մետր X 29 մետր արտաքին այլ գովազդ (Թույլտվություն թիվ ԱԳ-14 կցվում է):

2. «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝
1)կնքել գովազդի տեղադրման պայմանագիր Բյուրեղավան համայնքի հետ.
2)Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202411 հաշվեհամարին վճարել ամսական 282750 (երկու հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ արտաքին այլ գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հաստատված թույլտվությունը «Օնլիադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2026թ. N 370-Ա

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍՊԱՍԱՐԿՈՂԻՆ, ՕԳՏՎՈՂԻՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ մասի «ե» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված Համայնքային գույքի օտարման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման և կազմակերպման գործընթացի մեթոդական ուղեցույցի 2-րդ բաժնի 1-ին կետը՝ ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի (բացառությամբ հարկադիր կատարողի որոշմամբ հարկադիր աճուրդով իրացման ենթակա՝ արգելանքի տակ դրված գույքի) օտարման գործընթացը էլեկտրոնային աճուրդի միասնական համակարգի միջոցով իրականացնելու նպատակով սահմանել էլեկտրոնային աճուրդի համակարգը սպասարկողին, օգտվողին, պատասխատուին և նրանց գործառույթները՝ համաձայն հավելվածի:

2.էլեկտրոնային աճուրդի միասնական համակարգը սպասարկողի, օգտվողի և պատասխանատուի գործառույթները պետք է բխեն Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցով սահմանված համայնքային գույքի օտարման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման և կազմակերպման ողջ գործընթացներից:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 01
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2026թ. N 371-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով անշարժ գույքի վաճառքի պայմանագիրն ու Արա Էդվարդի Ֆարմազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս այգեգործական զանգված 17-րդ թաղամաս թիվ 17 հողամասի (վկայական N 27082013-07-0021) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամասի 6-րդ փողոց 40:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 02
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2026թ. N 372-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Նելլի Ժորայի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1․Կոտայքի Մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0005-0009) անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 7-րդ փողոց 20:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 02
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2026թ. N 373-Ա

### ՍԵՐՅՈԺԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Սերյոժա Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սերյոժա Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամասի 1-ին փողոց 131 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.05955 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-051-0101-0047) կցակառույց բնակելի տնով վերակառուցած բնակելի տան համար տալ ավարտական ակտ՝ շահագործման թույլտվություն (N ԱՇԹԴ/772/6824-26 ավարտական ակտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 02
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2026թ. N 374-Ա

### ԷԴԻԿ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հաշվի առնելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի N 60-Ն որոշումն ու հիմք ընդունելով Էդիկ Ջուլալի Անտոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/39:

2.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/39 հասցեի 0.00038 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի (ծածկագիր՝ 07-003-0037-ից) գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման:

3.Էդիկ Զուլալի Անտոնյանի (ծնված՝ 1953 թվականի օգոստոսի 09-ին) կողմից Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34/39 հասցեում գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00188 հեկտար մակերեսով հողամասում (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023A6SGKE) ինքնակամ կառուցված 16.9 քառակուսի մետր ներքին (18.8 քառակուսի մետր արտաքին) մակերեսով ավտոտնակը համարել Բյուրեղավան համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 3-րդ կետում նշված՝

1)ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)ավտոտնակը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3)ավտոտնակը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հաստատել սույն որոշման 3-րդ կետում նշված օրինական ճանաչված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 02
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2026թ. N 375-Ա

### ԼԵՎՈՆ ՏՐՈՒԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների ու հիմք ընդունելով Լևոն Գրիգորի Տրուզյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լևոն Գրիգորի Տրուզյանի (ծնված՝ 1953 թվականի հունվարի 07-ին) կողմից Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 32 շենքի հարևանությամբ գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0019 հեկտար մակերեսով հողամասում (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023UE3JL6) ինքնակամ կառուցված 17.4 քառակուսի մետր ներքին (19.0 քառակուսի մետր արտաքին) մակերեսով ավտոտնակը համարել Բյուրեղավան համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

2.Ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/36:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված՝

1) ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) ավտոտնակը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

3) ավտոտնակը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված օրինական ճանաչված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 02
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հուլիսի 2026թ. N 376-Ա

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԷԴԳԱՐ ՇԻՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺՆԵՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և հիմք ընդունելով էդգար Սլավիկի Շիրոյանի և Գոհար Գրիգորի Շիրոյանի դիմումն ու հաշվի առնելով Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 30-ի N 03 եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել էդգար Սլավիկի Շիրոյանին (նույնականացման քարտ՝ 009849951, տրված՝ 2018 թվականի հունվարի 16-ին, ծնված՝ 1990 թվականի հունվարի 27-ին) և Գոհար Գրիգորի Շիրոյանին (անձնագիր՝ AV 0321457, տրված՝ 2022 թվականի հուլիսի 18-ին, ծնված՝ 1993 թվականի մարտի 07-ին) օտարել իրենց անչափահաս երեխա՝ Հովհաննես Էդգարի Շիրոյանին (ծննդյան վկայական՝ ԱԲ N 187899, տրված՝ 2012 թվականի ապրիլի 13-ին, ծնված՝ 2012 թվականի ապրիլի 12-ին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 89 հասցեի բնակարանի (վկայական N 18122015-07-0033, տրված՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ին) իր բաժնեմասը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էդգար Սլավիկի Շիրոյանին և Գոհար Գրիգորի Շիրոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 03
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2026թ. N 377-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԳԱՌՆԻԿ ԱԶԻԲԵԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14$^{3}$-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 12062026-07-0235 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46 շենք 8 բնակարան հասցեի բնակիչ Գառնիկ Սայադի Ազիբեկյանի 2026 թվականի ապրիլի 02-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 63.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը 124834,6 (մեկ հարյուր քսանչորս հազար ութ հարյուր երեսունչորս ամբողջ վեց տասնորդական) դրամով և դրա զբաղեցրած 0.00317 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը (ծածկագիր՝ 07-003-0020-1173) 140805,06 (մեկ հարյուր քառասուն հազար ութ հարյուր հինգ ամբողջ վեց հարյուրերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Գառնիկ Սայադի Ազիբեկյանին (ծնված՝ 1963 թվականի հունիսի 30-ին):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Գառնիկ Սայադի Ազիբեկյանի կողմից:

4.Գառնիկ Սայադի Ազիբեկյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հացցեի տրամադրման համար ծառայության վճար:

5. Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ժորայի Ղազարյանին (անձնագիր՝ AV 0661399, տրված՝ 2023 թվականի մարտի 03-ին 059-ի կողմից, ծնված՝ 1980 թվականի հոկտեմբերի 12-ին) կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46/1 հասցեում գտնվող 63.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա զբաղեցրած 0.00317 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46 շենք 8 բնակարան հասցեի բնակիչ Գառնիկ Սայադի Ազիբեկյանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2026թ. N 378-Ա

### ԺԱՆԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունել Ժանետա Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Ժանետա Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 2-րդ փողոց 26/1 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.02113 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-003-0040-1063) կառուցված նկուղային հարկով երկհարկանի բնակելի տանը, պարսպին և ծածկարանին տալ ավարտական ակտ՝ շահագործման թույլտվություն (N ԱՇԹԴ/742/7703-26 ավարտական ակտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2026թ. N 379-Ա

### ՆՈՒՆԵ ԱԿՈՊՈՎԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Նունե Ակոպովայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ-2 թաղամաս 3-րդ փողոց 12 հասցեի հողամասի ջրագծի կառուցման (տեխնիկական պայման՝ ՎՋ2137/2026) նպատակով Նունե Ակոպովային տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N ՀՇԹ/742/2168-2026 շինարարության թույլտվությունը կցվում է):

2.Նունե Ակոպովային՝ շինարարությունն սկսել տեղական տուրքը վճարելուց և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 03
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հուլիսի 2026թ. N 380-Ա

## ՆՈՒՆԵ ԱԿՈՊՈՎԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Նունե Ակոպովայի ներկայացուցիչ Սամվել Մեհրաբյանի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Նունե Ակոպովային տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի Մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ-2 թաղամասի 3-րդ փողոց 12 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.05 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0018-0030, վկայական N 01042026-07-0316) կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար (N ՆԹ-8124-26 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում է)։

2. Նունե Ակոպովային՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,

2) կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 03
ք. Բյուրեղավան